ՈՐՈՇՈՒՄ

20 հուլիսի 2012 թվականի **թիվ** 59 քաղ. Մոսկվա

«Քսանյութերին, յուղերին եւ հատուկ հեղուկներին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» 2011 թվականի նոյեմբերի 18-ի պայմանագրի 3-րդ հոդվածին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Ընդունել «Քսանյութերին, յուղերին եւ հատուկ հեղուկներին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 030/2012) (կցվում է):

2. Սահմանել, որ «Քսանյութերին, յուղերին եւ հատուկ հեղուկներին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 030/2012) ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ից:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ս. Ռումաս	**Կ. Կելիմբետով**	**Ի. Շուվալով**